«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում»

Հաստատություն՝ «Երևանի հ.109 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Գրիգորյան Աննա

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ——— 2

ԳԼՈՒԽ 1 ՆՈՒՀ-ընտանիք համագործակցություն

1.1 Համագործակցությունը որպես երեխայի զարգացման գործընթաց ——— 4

1.2 Մանկավարժական աշխատողի և ծնողների համագործակցության կազմակերպման ձևերը ——— 6

ԳԼՈՒԽ 2 Ընտանեկան դաստիարակություն

2.1 Ընտանեկան դաստիարակության կապը մանկավարժական գործընթացի հետ ——— 8

Հետազոտական մաս ——— 11

Առաջարկություններ, եզրակացություններ ——— 13

Գրականության ցանկ ——— 15

Ներածություն

Արդի ժամանակաշրջանում բավականին վերափոխումներ են լինում գրեթե բոլոր ոլորտներում, որը բնականաբար իր ազդեցությունն է թողնում յուրաքանչյուրիս՝ այդ թվում նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման գործընթացում: Յուրանքանչյուր երեխա անհատականություն է, որն էլ ենթադրում է իր առանձնահատկություններին համապատասխան կրթական գործունեության կազմակերպում: Այն ինչ երեխան ձեռք է բերում մանկության շրջանում, ուղեկից է նրան ողջ կյանքում: Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացման գործընթացում առանձնահատուկ կարևորվում է ընտանիքի, նախադպրոցական ուսումնական հաստատության փոխպայմանավորված աշխատանքն ու համագործակցությունը: Երեխայի դաստիարակությունը սկսվում է ընտանիքում, իսկ հետո իր շարունակությունը գտնում նախադպրոցական ուսումնական հաստատությունում: Նախադպրոցական ուսումնական հաստատության կողմից իրականացվող ողջ գործընթացի արդյունավետ կազմակերպումը պահանջում է սաների ընտանիքների հետ համագործակցության ձևերի և մեթոդների կատարելագործում: ՆՈՒՀ-ի աշխատողի և ծնողների համատեղ աշխատանքից է կախված նախադպրոցականի հետագա զարգացումը: ՆՈՒՀ-ի աշխատանքի որակից է կախված ծնողների մանկավարժական մշակույթի մակարդակը և, սրանից ելնելով, նաև, երեխաների ընտանեկան դաստիարակության մակարդակը: ՆՈՒՀ-ի առջև դնելով կարևոր խնդիր՝ մանկավարժական համագործակցության շրջանակներում օգտագործել ընտանիքի դաստիարակչական և կրթական մեծ ներուժը կարող է հասնել դրական արդյունքների ի շահ երեխաների:

Թեմայի արդիականություն: Ներկայումս ՆՈՒՀ-ի խնդիրն է ծնողների հետ համագործակցությունը մանկավարժական աշխատակիցների հետ: Այս ամենը կարող է նպաստել հարաբերությունների լավարկմանը, անհանգստացնող խնդիրների բարձրացմանը և համագործակցության նարավոր տարբերակների մշակմանն ու կիրառմանն ի շահ երեխաների:

Աշխատանքի **նպատակն է՝** նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի և սաների ծնողների հետ աշխատանքի

կազմակերպման ու ընտանեկան դաստիարակության արդյունավետ իրականցման կազմակերպումը:

Նպատակից ելնելով, առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

- Կատարել թեմային համապատասխան գրականության վերլուծություն
- Պարզել ծնողների կողմից ներկայացվող համագործակցության ցանկալի տարբերակները
- Կատարել համագործակցության արդյունավետության վերլուծություն

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 2 գլուխներից, հետազոտական մասից, եզրակացությունից և առաջարկություններից:

ԳԼՈՒԽ 1

ՆՈՒՀ-ԸՆՏԱՆԻՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1.1 ՆՈՒՀ-ընտանիք համագործակցությունը, որպես երեխայի զարգացման գործընթաց

Նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական զարգացման համար գոյություն ունի երկու կարևոր կառույց՝ նախադպրոցական հաստատություն և ընտանիք։ Ընտանիքում են դրվում երեխայի վաղ զարգացման հիմքերը, իսկ մանկավարժը շարունակում է մարդ տեսակի ձևավորման գործընթացը, բայց չպետք է մոռանալ, որ այսօր կյանքն առաջ է գնում և ներկայիս երեխաները հատուկ ուշադրություն են պահանջում։ Նոր սերունդը կարող է կրթվել միայն համագործակցության միջոցով, որը իրականացվում է մանկավարժական աշխատողների և ծնողների միջոցով։

Ընտանիքը երեխայի համար հասարակական փորձի աղբյուր է։ Ընտանիքն ու մանկապարտեզը փոխկապակցված գործունեություն են իրականացնում, որն ապահովում է երեխաների դաստիարակության և կրթության շարունակական լինելը։ Այս ամենի կարևոր պայման է ընտանիքի և մանկապարտեզի միջև վստահելի գործնական կապի հաստատումը, որի ընթացքում վերանայվում է ծնողների և մանկավարժական աշխատողների համագործակցության գործընթացը, ինչը հատկապես անհրաժեշտ է երեխաների սահուն անցմանը դպրոցին։

Ընտանիքում ստեղծված բարոյահոգեբանական մթնոլորտն իր ուղղակի ազդեցությունն է թողնում երեխաների դաստիարակության վրա։

Մանկավարժական աշխատողների և ծնողների համագործակցությունը թույլ է տալիս ավելի լավ ճանաչել երեխային, դիտարկել նրան, տեսնել նրան տարբեր իրավիճակներում և, հետևաբար, օգնել հասկանալու նրա անհատական առանձնահատկությունները, երեխայի կարողությունների զարգացումը։ [6]

Առհասարակ մարդկության հազարամյա պատմության ընթացքում զարգացել են դաստիարակության երկու ճյուղ՝ ընտանեկան և հասարակական։ Այս ճյուղերից յուրաքանչյուրը, որը ներկայացնում է կրթական, դաստիարակչական և սոցիալական հաստատություն, ունեն իրենց հատուկ հնարավորությունները երեխայի անհատականությունը ձևավորելու գործում։

Մանկավարժների համագործակցությունը ծնողների հետ ներառում է փոխօգնություն, փոխադարձ հարգանք, ինչու ոչ նաև վստահություն, որը հնարավորություն է ստեղծում մանկավարժին իմանալու և դիտարկելու ընտանեկան դաստիարակության պայմանները, իսկ ծնողներին՝ մանկապարտեզում կրթական պայմանների իմացություն: Դա ապահովում է նաև ծնողների և մանկավարժների փոխադարձ ցանկությունը՝ պահպանել կապ միմյանց հետ:[1]

Այսօր ընդունված է խոսել ընտանիքի և նախադպրոցական հաստատության համագործակցության նոր մոտեցման մասին: Այս փոխազդեցության գաղափարը կայանում է նրանում, որ հենց ծնողներն են պատասխանատու երեխաների կրթության և դաստիարակության համար, իսկ նախադպրոցական ուսումնական հաստատությունները պետք է աջակցեն, լրացնեն և ուղղորդեն նրանց կրթական, դաստիարակչական, զարգացման գործունեությունը: Նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար առաջնային տեղ է զբաղեցնում հենց այդ համագործակցությունը: Ծնողների հետ համագործակցելիս պետք է նկատի ունենալ, որ այսօր երեխան այլ է, քան երեկ: Երկկողմանի այդ համագործակցությունն անհնար է իրականացնել առանց շահերի ու ցանկությունների հաշվի առնելու:

Մանկապարտեզ-ընտանիք փոխհարաբերության վերլուծությունները ցույց են տալիս, որ հատկապես վերջին տարիներին նկատելի են մանկավարժական գիտելիքների իրազեկմնա և տարածման ձևերի փնտրտուքը՝ ծնողների կրթության իրականացման փորձերը: Մանկապարտեզի և ընտանիքի փոխադարձ կապի, համագործակցության ձևերը պարբերաբար վերանայվում են: Այս ամենի հիման վրա էլ ծնողները ձեռք են բերում չափազանց կարևոր մանկավարժական գիտելիքներ և կարողանում են գնահատել այն աշխատանքը, որն իրականացվում է մանկավարժական աշխատակիցների կողմից:

Այսպիսով, որքան հետաքրքիր լինեն համագործակցության ձևերն ու մեթոդները, այնքան բարձր կլինի նախադպրոցական հաստատության վստահելիությունը և համագործակցության մեջ ներգրավված ծնողների թիվը: [5, էջ 4]

1.2 Մանկավարժական աշխատողի և ծնողների համագործակցության կազմակերպման ձևերը

Մանկավարժական աշխատողների և ծնողների համագործակցությունը նպաստում է երեխաների բացասական գործողությունների և վարքագծային դրսևորումների հաղթահարմանը, իրավիճակներում համապատասխան արձագանքի, պատճառահետևանքային կապերի, դիրքորոշումների ձևավորմանը:

Միևնույն ժամանակ, ծնողների մեծ մասը պրոֆեսիոնալ դաստիարակներ չեն: Նրանք հատուկ գիտելիքներ չունեն երեխաների դաստիարակության և կրթության ոլորտում, հաճախ դժվարություններ են ունենում երեխաների հետ շփումներ հաստատելու հարցում: Մանկավարժներն ու ծնողները միասին փնտրում են այս խնդրի լուծման ամենաարդյունավետ ուղիները: [4]

Նման փոխգործակցության հաստատման գործում որոշիչ դերը պատկանում է մանկավարժական աշխատողներին: Միասնականություն, համագործակցություն և փոխադարձ վստահություն հնարավոր է միայն այն դեպքում, եթե մանկավարժական աշխատողը չի սովորեցնում, այլ խորհուրդ է տալիս, իրավիճակներն արտացոլում են նրանց հետ, համաձայնում է համատեղ գործողությունների մասին, նրբանկատորեն առաջնորդում է նրանց մանկավարժական գիտելիքների անհրաժեշտության ըմբռնմանը: Աշխատակիցների և ծնողների միջև փոխգործակցության, հաղորդակցության ողջ մթնոլորտը պետք է ցույց տա, որ նա ծնողների կարիքն ունի ջանքերը միավորելու համար, որ ծնողները նրա դաշնակիցներն են, և նա չի կարող անել առանց նրանց խորհրդի և օգնության:

Ոչ բոլոր ծնողներն են արձագանքում իրենց հետ համագործակցելու մանկավարժի ցանկությանը և հետևաբար հետաքրքրություն չեն ցուցաբերում իրենց երեխային կրթելու և դաստիարակելու գործում: [5]

Մանկավարժական աշխատողը պետք է լցված լինի բավականաչափ համբերությամբ և այս խնդրի լուծման ուղիների կենտրոնացված որոնմամբ: Մենք աշխատանք իրականացնում ենք բոլոր ծնողների հետ, սակայն աջակցել աշխատակիցներին, քչերն են պատրաստակամ և այդպիսի ծնողները փոքրամասնություն են կազմում:

Մեծահասակների և երեխաների միջև համագործակցության ձևավորման համար կարևոր է դառնալ մեկ ամբողջություն, որպես մեծ սերտ ընտանիք, որը հետաքրքիր

կլինի այն դեպքում, երբ կազմակերպվեն մանկավարժական աշխատողների, ծնողների և երեխաների համատեղ գործունեությունը: Սա նպաստում է ծնողների և երեխաների միջև փոխըմբռնման հաստատմանը, ընտանիքում հարմարավետ պայմանների ստեղծմանը:

Մեր ՆՈՒՀ-ի մանկավարժական գործունեության ընթացքում ծնողների հետ համագործակցությունը իրականացնում ենք ծնողական ժողովների, անհատական և խմբային զրույցների միջոցով, կազմակերպում ենք նաև բաց դռների օրեր:

Ծնողական ժողովները- Նման հանդիպման շրջանակներում քննարկվում են տարատեսակ հարցեր, բարձրաձայնվում անհանգստացնող խնդիրները: Իհարկե, կարևոր տեղ է տրվում, որ կազմակերպվող ժողովները լինեն արդյունավետ: Գաղտնիք չէ, որ ծնողների վերաբերմունքն ըստ իրենց կրթության և փորձի՝ կարող է տատանվել զոհունակությունից մինչև թերահավատություն:

Անհատական և խմբային զրույցներ-Առհասարակ նմանատիպ զրույցները հնարավորություն են տալիս միշտ շփման մեջ լինել ծնողի հետ, իրազեկել նրանց երեխայի առօրյայի մասին և անհրաժեշտության դեպքում համատեղ ազդել երեխայի վարքի վրա: Ծնողների հետ կազմակերպվող անհատական զրույցները գնահատելի են նրանով, որ հնարավորություն են տալիս միշտ շփման մեջ լինել ընտանիքի հետ և ավելի ազատ խոսել երեխայի մասին[7]: Զրույցների բովանդակությունը որոշվում է երեխայի վարքով: Այսպիսով, զրույցները հնարավորություն են տալիս դաստիարակին միշտ շփման մեջ լինել ծնողի հետ, շահագրգիռ երկու կողմերին էլ իրազեկ դարձնել երեխայի կյանքի բոլոր իրադարձություններին և ըստ այդմ խորհրդատվությունների միջոցով, տարբեր գործոններով համատեղ ազդել երեխայի վարքի վրա:

Համատեղ աշխատանք ծնողների հետ- Ծնողների հետ միասին իրականացվում են մի շարք միջոցառումներ, օրինակ՝ թեմատիկ պաստառի պատրաստում, իրենց կողմից արված ստեղծագործական աշխատանքներ և մասնակցություն ընդհանուր մանկապարտեզային աշխատանքներին:

ԳԼՈՒԽ 2

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

2.1 Ընտանեկան դաստիարակության կապը մանկավարժական գործընթացի հետ

Ընտանեկան դաստիարակության դժվարությունների հաղթահարմանը նպաստում է ընտանիքի հետ համագործակցությունը նախադպրոցական ուսումնական հաստատությունների հետ և սա անհերքելի փաստ է: Երբ խոսում ենք մանկապարտեզ-ընտանիք համագործակցությունից, մանկավարժական աշխատողների և ծնողների համատեղ իրականացվող գործընթացից, չենք կարող չանդրադառնալ նաև ընտանեկան դաստիարակութանը: Ընտանեկան դաստիարակության ոճերը տարբեր են և յուրաքանչյուր ընտանիք ինքն է ընտրում դաստիարակության իր ոճը: Ընտանեկան դաստիրակության ոճերը ընտանիքում երեխաների հետ ծնողների շփման, նրանց վարքի վերահսկողության և կիրառվող դաստիարկության մեթոդների համակարգն է: Ցավոք այսօր մեր իրականության մեջ գերակշռում է դաստիարակության ավտորիտար ոճը, որն իրենից ենթադրում է արտահայտված կախվածություն մեծահասակից: Հարկ է նշել, որ ցանկացած դաստիարակության ոճի ընտրության և գերակայության դեպքում, այն իր ազդեցությունն է ունենում և երեխայի զարգացման գործընթացը տարբեր կերպ է ընթանում: Իհարկե մեծ ու նշանակալի է ընտանիքի դերը անձի ձևավորման գործում: Ընտանիքն այնպիսի համակարգ է, որն իր բոլոր դրսևորումներով «ընդգրկում է» մարդուն որպես ամբողջություն և այստեղ ձևավորվում են բոլոր անձնային որակները:[2, էջ 1]:

Դաստիարակման ընթացքի վրա շատ է ազդում ընտանիքի այս կամ այն մշակույթի պատկանելիությունը… Տվյալ հասարակության նորմերն ու արժեքները, սովորույթները, ծեսերը շատ մեծ դեր են խաղում երեխայի դաստիարակության վրա»:

Կարելի է առանձնացնել ընտանիքի ինստիուտի հետևյալ գործառույթները.

- վերարտադրողական,
- դաստիարակչական,
- սոցիալականացման,
- ապահովության,
- պաշտպանության,

● հուզական աջակցության,

● տնտեսական,

● կարգավիճակային,

● զարգացման,

● արժեքային տրանսֆորմացիայի,

● կոլեկտիվ ձեռնարկումների:

Այլ խոսքով, ազգային, համամարդկային և հասարակական բարոյական արժեքներին երեխան սկսում է ծանոթանալ ընտանիքի անդամների հետ ունեցած փոխհարաբերությունների շնորհիվ:

Երեխաների դաստիարակության գործում կարևոր դեր է խաղում ընտանիքի ընդհանուր կենսակերպը՝ ամուսինների իրավահավասարությունը, ընտանեկան կյանքի կազմակերպումը, ընտանիքի անդամների միջև ճիշտ հարաբերությունները, փոխադարձ հարգանքն ու հոգատարությունը, հայրենասիրություն, մեծահասակների պահանջների միասնականությունը: Ծնողները պետք է հեղինակություն ունենան երեխայի աչքում, առանց այդ դաստիարակության անհնար է: Ամենահեղինակավորն այն ծնողներն են, ովքեր հաջողությամբ համատեղում են աշխատանքային և սոցիալական գործունեությունը ընտանեկան պարտականությունների հետ, հետաքրքրություն և ուշադրություն են ցուցաբերում իրենց երեխաների կյանքին, հմտորեն և նրբանկատորեն կառավարում են իրենց կյանքն ու զարգացումը, այս ամենը հավասարապես վերաբերում է մորը և հորը:

Նախադպրոցական տարիքի երեխայի համար ծնողների հեղինակությունը, այսպես ասած, գոյություն ունի հենց սկզբից և անվիճելի է: Հայրիկն ու մայրիկը նրա համար «ամենա, ամենաշատն» են՝ գեղեցիկ, խելացի, համարձակ և այլն: Նախադպրոցական տարիքի երեխաների վեճերում ամենաազդեցիկ փաստարկը «հայրիկս այդպես է ասել», «մայրիկս անում է»: Ծնողների գործողություններն ու դատողությունները ենթակա չեն քննադատության: [3]

Ընտանիքից հետո, երեխաների դաստիարակության գործում առաջատար դերը պատկանում է մանկավարժական աշխատողներին: Նրանք ասես կառուցում են երիտասարդ քաղաքացու ապագան, սակայն ցանկանում ենք նշել, որ Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենքում նշված է, որ երեխայի հաճախելը

նախադպրոցական ուսումնական հաստատություն չի ազատում ընտանիքին նրան ընտանեկան միջավայրում դաստիարակելու, զարգացնելու և կրթելու պարտավորությունից: Հետևաբար արդյունք ունենալու համար, համագործակցությունը կարևոր պայման է:

Ուսումնական գործընթացի հաջողությունը կախված է նրանից, թե ինչպես են մանկավարժական աշխատակիցները, ծնողները համագործակցում և շփվում երեխաների հետ: Մանկավարժական աշխատակիցը պարտավոր է հենց առավոտյան մուտքից սկսած, երեխաներին տրամադրել դրական հույզեր, որպեսզի երեխաները հանգիստ հրաժեշտ տան ծնողներին և առանց արցունքների խումբ մտնեն: Սրանից է կախված երեխայի հետագա վերաբերմունքը հասակակիցների և մեծահասակների հետ շփման նկատմամբ: Կարևոր է հանդիպել ոչ միայն երեխային ժպիտով և ջերմությամբ, այլև հենց ծնողներին. երկուսն էլ պետք է հանգիստ վերաբերվեն տնից դուրս իրենց գործունեությանը (մանկապարտեզ և աշխատանք): Առհասարակ նախադպրոցական ուսումնական հաստատությունները չեն փոխարինում ընտանեկան դաստիարակությանը, այլ լրացնում ու համակարգում են այն՝ համագործակցելով երեխաների ծնողների ու ընտանիքների հետ: Այսպիսով, ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունը շարունակում է ընտանիքի աշխատանքը, օգնում ընտանիքին: [8]

Հետազոտական մաս

Հետազոտությունը կատարվել է «Երևանի հ. 109 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում: Մեր հետազոտությունը կատարվել է կրտսեր առաջին խմբում:

Այս խմբում, ծնողների հետ համագործակցությունը իրականացրել ենք ծնողական ժողովների, անհատական զրույցների և համատեղ գործունության միջոցով: Իհարկե այս ամենից բացի պարբերաբար ըստ ծնողի ցանկության, նրանք եղել են մանկապարտեզում՝ ուսումնասիրել խմբասենյակը, դիտարկել ողջ այն գործունեությունը, որը կազմակերպվել և իրականացվել է մեր կողմից:

Համատեղ գործունեության շրջանակում, փորձել ենք ծնողների հետ միասին ստեղծել ենք խավատախտակներ, որը հնարավորություն է տալիս իրականացնել ապլիկացիայի աշխատանքը նաև առանց սոսնձի:

Ծնողների ցանկությամբ և իրենց մասնակցությամբ նաև իրականացրել ենք տիկնիկային թատրոն: Այս նախաձեռնությունը ծնողներին է եղել, և մեծ ոգևորությամբ նրանք մասնակից եղան, թեև մեծ էր նաև երեխաների ոգևորությունը, երբ ներկայացման ավարտին տեսան, որ իրենց ծնողներին էին ներկայացնում դա:

Ներգրավվում են նաև մանկապարտեզի գործունեության աշխատանքներին՝ թեմատիկ անկյան պատրաստում, միջոցառումներ:

Եթե փորձենք համեմատել, թե համագործակցության, որ ձևն են նախընտրում ծողները, ապա տոկոսային հարաբերակցությամբ կտեսնենք հետևյալ պատկերը (տես գծ. 1)



Ստացված արդյունքներից երևում է, որ կրտսեր առաջին խմբի ծնողներից շատերը մասնակցություն չեն ունենում ծնողական ժողովներին, որոշակի պատճառներից ելնելով, հիմնականում խնդիրը ներկա չգտնվելու ծնողների աշխատանքային երկար ժամանակահատվածն է: Ըստ տվյալի, մասնակացությունը ծնողական ժողովներին տոկոսային հարաբերակցությամբ ցածր տեղում է, կազմելով խմբի ընդհանուր ծնողների 30%-ը:

Հաջորդ տեղում, կարելի է ասել միջին դերում է գտնվում անհատական և խմբային զրույցը, կազմելով՝ 34%: Նման տոկոսային հարաբերակցությունը պայմանավորված է նրանով, որ առավոտյան ընդունելության և երեկոյան տուն ճանապարհելիս մշտապես ծնողների հետ հանդիպում լինում է և թե դաստիարակը, և թե ծնողը տեղեկացված են լինում երեխայի ցանկացած գործունեությանը, նրա անցակացրած օրվանից և իրականացրած գործունեությունից:

Տոկոսային առումով, բարձր ցուցանիշ է կազմում համատեղ գործունեությունը, որն ինչպես արդեն նշել ենք իրենից ենթադրում է միջոցառումներին, ուսումնական գործունեությանը, դիդակտիկ խաղերի պատրաստման գործընթացին ծնողների ներգրավմանը: Ընդհանուր թվով այս գործընթացին ավելի շատ ծնողներ են մասնակից լինում և կազմում է 58%:

Ելնելով ծնողների հետ մեր կողմից կազմակերպվող և իրականացվող համագործակցության ձևերից, կարող ենք ասել, որ ծնողները ներգրավված են համագործակցության մեջ, չնայած երբեմն առաջացող տարաձայնությունների, որը ևս բնական է համագործակցության շրջանակներում:

Իհարկե այս բոլոր վերոնշյալ և իրականացվող համագործակցության տեսակները ավանդական են և իրականացվում են գրեթե բոլոր ՆՈՒՀ-երում, սակայն սրանց արդյունավետությունը անհերքելի է, եթե այն կատարում ենք սիստեմատիկ և ճիշտ մտածված՝ հաշվի առնելով, ոչ միայն երեխաների առանձնահատկությունները, այլ նաև ծնողների առանձնահատկությունները:

Եզրակացություն

Հաշվի առնելով ժամանակակից երեխայի զարգացումն ու ծնողների պահանջը, միանշանակ գալիս ենք այն եզրակացության, որ ծնող-մանկապարտեզ համագործակցությունը կարևոր գործոն է: Ներկայումս շատ կարևոր է ծնողների համար նախադպրոցական ուսումնական հաստատության բաց լինելու սկզբունքի իրականացումը, քանի որ այն ենթադրում է, որ ծնողները կարող են ազատ և իրենց ցանկությամբ, ծանոթանալ մանկապարտեզում երեխայի գործունեությանը, նախադպրոցականների հետ իրականացվող գործընթացին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երեխայի կրթության, զարգացման և դատիարակության գործընթացը սկսվում է ընտանիքից և համապատասխանաբար շարունակվում է նախադպրոցական ուսումնական հաստատությունում, կարելի է փորձարկել նաև նոր տարբերակներ նրանց հետ աշխատելու գործում:

Աշխատանքի սկզբում մեր առջև դրված խնդիրների ելնելով, կատարեցինք

- Թեմային համապատասխան գրականության վերլուծություն- բացահայտելու համար, առհասարակ ընտանեկան դաստիարակության, ծնող-մանկապարտեզ համագործակցության ձևերը, դրանց արդյունավետությունն ու կազմակերպման տարբերակները:
- Պարզել ծնողների կողմից ներկայացվող համագործակցության ցանկալի տարբերակները- Ներկայացնելով մեր կողմից իրականացվող համագործակցության ձևերը, որոնք իրենց բնույթով ավանդական են և իրականացվում են բոլոր ՆՈՒՀ-երում, բացահայտեցինք, որ ծնողների կողմից ցանկալի համագործակցության ձևը համատեղ գործունեությունն է:
- Կատարել համագործակցության արդյունավետության վերլուծություն- Ստացված տոկոսային հարաբերակցությունից պարզ դարձավ, որ արդյունավետության տեսանկյունից համատեղ աշխատանքներն են, որոնք հնարավորություն են ստեղծում ծնողների մտերմությանը, խմբի, մանկապարտեզի աշխատանքների մասնակցությանը:

Ելնելով ուսումնասիրությունից ու մեր ունեցած փորձից, պետք է նշել,սակայն ներկայիս ծնողների առաջարկներն ու պահանջները: Ինչպես երեխաները, այնպես էլ ծնողները ժամանակային պահանջներից ելնելով ևս նոր մոտեցումներ ու պահանջներ ունեն: Հետևաբար, որպեսզի մենք ևս կարողանանք ավելի շատ ծնողներ ունենանք, ովքեր կներգրավեն համագործակցության մեջ, առաջարկում ենք կիրառել նաև հետևյալ տարբերակները՝

- Անանուն հարցարաններ -անանուն հարցարանների լրացումը ավելի անկեղծ և արդարացի արձագանքներ կտա, ցանկացած աշխատանքի վերաբերյալ: Չնայած նրան, որ մեր մանկապարտեզում ունենք նաև առաջարկությունների արկղիկ և պարբերաբար այնտեղից որոշակի տեղեկություններ մեզ համար ունենում ենք, սակայն միշտ չէ, որ դա ակտիվ իր դերն ունենում է: Սակայն, այդտեղից ստացած առաջարկների վերբաերյալ ևս բարելավում ենք մեր կողմից կատարվող կրթական, դաստիարակչական ածխատանքը:
- Ուսումնական գործընթացում ծնողների ներգրավում- խոսքը միայն միջոցառումների կազմակերպման մասին չէ, այլ ընդհանուր աշխատանքային գործունեության մասնակցության մասին է: Երբ ծնողն անձամբ մասնակից լինի գործունեությանը, ավելի լավ պատկերացում կունենա ընդհանուր ծավալվող գործունեությանը:

Գրականության ցանկ

1. Бережнова О.В Семинар-практикум. Взаимодействие с семьей воспитанников в процессе подготовки детей к школе. – Москва: Педагогическое общество России, 2014.- 96с
2. http://www.kld5.ru/roditeyam/rekomendatsii/printsipy-i-metody-semeynogo-vospitaniya “Принципы и методы семейного воспитания” 2018
3. http://dou128.sochi-schools.ru/roditelyam/rol-semi-v-vospitanii-rebenka/
4. http://mdou43-kem.ucoz.ru/index/l_m_khoroshilova_quot_rol_pedagoga_v_vospitanii_detej_doshkolnogo_vozrasta_quot/0-155
5. http://elar.uspu.ru/bitstream/uspu/11436/2/10Minevich.pdf
6. Ասյա Հովհաննիսյան
7. Ա.Ա. Մարության, Ա.Մ. Դալլաքյան: Նախադպրոցական մանկավարժություն, բուհական դասագիրք. Երևան 2008 թ.
8. Միտոյան Հասմիկ, Սմբատյան Լալա: Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար. Երևան 2010 թ

Հավելվածներ